

17. [Ի յարութիւն մեռելոց]<sup>1</sup> ի դատաստանն յախտննից [Հողոց եւ մարմնոց, յարքայութիւն երկնից եւ ի կեանն յաւիտենականա] :

Կան զըջազիրք, ինչպէս մեր Վ իենն, մանդրնին (Թիւ 97) եւ կայսր. թգր. մանգր. (Cod. Arm. 14) որոնք ունին “ի դատաստանն յախտննական,, որն որ εἰς χριστον αἰώνιον ἔστιν ըստ իմիք աւելի կը համապատասխանէ :

18. [Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Արզին, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ Հողին, կամ թէ յոչէից եղեն] կամ յայլմէ էութենէ ասն լինել զՌորդին Աստուծոյ [եւ կամ զսուրբ Հողին] :

Յոյն բնագրին մէջ կրկին բառ է “էութեան,, տեղ, որոնց մէկը՝ այս ինքն ὑπόστασις, որ թէ անձն եւ թէ էութիւն կը նշանակէր, բայց քովը ὁδία գրուած ասոն կը նշանակէր եռութիւն : Ինչպէս Ներսիսի Շ ինողի օրինակին մէջ՝ նոյնպէս շատ ձեռագրաց մէջ հայերէնն ալ կրկին բառ “ յայլմէ էութենէ եւ ի զոյութենէ,, կրտէ, կատարեալ հաւասարն շանակութեամբ : Հիմակուան սպագրութեանց մէջ երկուքէն վերջինը վերցուած է :

19. Եւ թէ փոփոխելի են կամ այլայլելի :

Աւելի յունականին կը մօտենայ Աբրահամու կաթողիկոսի 6<sup>ր</sup> դարուն իր Շ քնարերականին ընթերցուածը “ փոփոխելի կամ այլայլելի,, : Ասոր կը նպաստէ նաեւ Ներսիսի Շ ինողի թուղթը 7<sup>ր</sup> դարէն, որն որ ունի “ կամ փոփոխելի կամ այլայլելի,, :

20. Զայնպիսիսն նզովէ կաթողիկէ առաքելական եկեղեցի<sup>2</sup> :

Հոս մեծ զեղում մը կայ հայերէնին մէջ : Յոյնը կրտէ. “ Զայնպիսիսն նզովեմք, քանզի նզովէ զնոսա կաթողիկէ մայր մեր եւ առաքելական եկեղեցի : Եւ նզովեմք զամենեսին՝ որ ոչն իստատովանին զյարութիւն մարմնոյ, եւ զամենայն ներծուած, այս ինքն զայնոսիկ՝ որ չենն ի նաւատոց աստի յայսմանէ սուրբ եւ միայնոյ կաթողիկէ եկեղեցոյ,, : Աս թերին (որն որ ստուգիւ չի կրնար թարգմանչին արուիլ, իբրեւ թէ ամէն բան թարգմանելն ետքը՝ աս վերջին ծայրը հեղգացած ըլլայ թարգմանելու) չենք կրնար մեզի ծանօթ ձեռագրերն երէն լեցրնել : Սակայն հոս ալ Ներսիսի Շ ինողի թղթոյն մէջ գտնուած բնագիրը 7<sup>ր</sup> դարէն՝ աս պակասէն կտոր

<sup>1</sup> Աս փակագծերու մէջ եղածներն չունի բնագիրը :

<sup>2</sup> Կան ձեռագիրք, ինչպէս Վ իենն. կայս. մատենադարանին Cod. Arm. 19, որոնք յայսմ մասին շարք մը տարբերութիւններ ունին. բայց ասոնք, իբրեւ

բարոյովն կամայականք, քիչ արժէք կրնան ունենալ եւ են հետեւեալք. “ Իսկ որք ասեն գրանէ, էր երբեմն . . . յոչէից եղեալ . . . զէ դայնդիտէ սասցողան ու ընդունի, այլ նզովէ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի” :